

Ճշմարտությունը կեղծիքի սովոր մարդկանց վախեցնում է

Մարգարյան Սուրեն Թ.

պ.գ.դ., պրոֆեսոր, առաջատար գիտաշխատող, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ (Երևան, ՀՀ)
sargsyansuren@yandex.ru

EDN: PYXOHK

*Ստեղծու համար՝ նախ նշմարտությունը պիտի իմանալ...
ժողովրդական*

Տարիների ընթացքում կուտակված կենսափորձը, թե երկրիս ժամանակավոր, սակայն նաև տագնապալեցուն դադարը առիթ են դարձել, երբեմն էլ ստիպում են մտորել աշխարհի, մարդկանց ու ապագայի շուրջ: Կարևորը միշտ անկեղծ լինելն է ու շիտակ, քանզի կեղծիքի սովոր մարդկանց՝ անկեղծությունը վախեցնում է: Ռեմարկը (գերմանացի ականավոր գրող) կյանքի վերջին տարիներին շատ էր փիլիսոփայում և հանգել էր մի կարևոր խնդիր-հարցի՝ եթե բոլորը երջանիկ լինեին, Աստծո կարիք այլևս չէին ունենա՞: Ենթադրում եմ՝ կունենային: Ուղղակի մարդիկ՝ Աստծո օրենքները շրջանցելու համար, հաճախ իրենց օրենքներն են հորինում: Հետո էլ՝ Ժամանակ և Տարածություն ստեղծող էությունն ավելին է քան անսահմանությունը, հետևապես անհեթեթություն է Աստծուն տեղադրել մեկ կերպարի մեջ, դա շատ է նեղացնում այդ կերպարն ու պատկերացումները նրա մասին:

Կյանքն ու աշխարհն էլ ի՛րենց երթևեկության կանոններն ունեն: Բայց մենք դրանք չգիտենք և հենց այդ պատճառով է, որ մեր կյանքի վթարները շատ են, կորուստներն՝ անդառնալի: Ամեն օր, լուսաբացին մոտ, երբ լռում է ամենայն աղմուկ, Երկրի ընդերքից ծանր տնքոց-հոգոց եմ լսում: Հավանաբար Մոլորակը հոգնել է մարդուց: Հատկապես այնպիսիներից, որոնք փողակուտակման վայրի մոլուցքով տարված՝ ցատկոտում են բոլոր տեսակի ու գույնի ճյուղերի վրայով, անում են ամեն ինչ այն կործանելու համար: Մոռանալով, որ սեփական առանցք չունեցողները պտտվում են ուրիշի առանցքի շուրջ, որ բոլոր դեպքերում երբ լռում են արծիվները, թռչակներն են սկսում զավզակել: Որ երկու տիրոջ ծառան ավելի հաճախ մտածում է կրկնակի վարձատրության մասին, մոռանալով, որ պատիժն էլ է կրկնակի լինելու:

Ինձ դուր են գալիս մարդիկ, իրավացիորեն ասում էր ուրուզվայցի լրագրող, բանաստեղծ, գրող, դրամատուրգ, գրականագետ Մարիո Բենեդետտին, որոնք արդար են իրենց շրջապատող մարդկանց ու իրենք իրենց հետ, մարդիկ, որոնք շնորհակալություն են հայտնում նոր օրվան, իրենց կյանքում գոյություն ունեցող լավին, որոնք ամեն ժամն ապրում են լավ տրամադրությամբ՝ տալով իրենցից ամենավաճ: Որոնք շնորհակալ են ողջ լինելու համար, որ կարող են ժպիտներ նվիրել, ձեռք մեկնել և բարեհոգաբար օգնել: Իսկ ինձ դուր են գալիս տեսակետ ունեցող մարդիկ, նրանք, որոնք չեն ամաչում գիտակցել, որ սխալվել են կամ որ ինչ-որ բան չգիտեն: Մարդիկ, որոնք իրենց սխալներն ընդունելիս, ջանում են նորից չկրկնել դրանք: Մարդիկ, որոնք պայքարում են ձախորդությունների դեմ: Մարդիկ, որոնք ամենաաղվար պահին անգամ ելք են փնտրում: Ինձ դուր են գալիս մարդիկ, որոնք ներքուստ են մտածում ու չափում, որոնք չեն արժևորում իրենց նմաններին հասարակական կաղապարով կամ թե ինչպես են նրանք փայլում: Մարդիկ, որոնք չեն դատվում ու թողնում, որ ուրիշները դատեն:

Վերջապես ինձ դուր են գալիս մարդիկ, որոնք անհատականություն ունեն: Իսկապես դրանք բարձրագույն արժեք են, որոնց կարիքն այսօր մեր հասարակությունը շատ ունի: Հասարակություն, որն ինքն էլ չի հասկանում, թե ինչի համար և ինչ նպատակով արհեստականորեն բևեռների է բաժանված, որոնք պատրաստ են իրար հոշոտելու: Հասարակություն, որտեղ ամենուր և ամեն ինչում չպատճառաբանված ստի գործոնն է թևածում: Իսկ սուտը ծնվում է վախի պատճառով, ասում է Բագրատ սրբազանը: Մարդը երբ վախենում է, ամեն ինչի մասին սկսում է սուտ խոսել, սկսած կենցաղից, վերջացրած մեր մեծ հարցերից, հետևաբար մենք նախ վախը մեզանում պետք է վերացնենք: Հետո էլ հստակ պատկերացնենք, որ տգետ հիմարի դոգմատիզմը անհաղթահարելի պատնեշ է ոչ միայն գիտուն խելացիի, այլև՝ ամենագետ իմաստունի մտքի սլացքի համար: Վերջապես մտածենք, որ տիեզերական բանականությանը ներդաշնակ հանրության եռաշերտ տիրույթները ներդաշնակելու համար կարևոր է ճանաչել մեր իմաստասիրությանը բնորոշ բանականության

փորձառությունը: Քանզի դա է ապահովում հանրության ու անհատի ամբողջական խնամքը և հավաքական ինքնության պահպանումն ու զարգացումը:

Իսկ ինչպե՞ս ճիշտ կազմակերպել այդ ամենը՝ հաշվի առնելով այս վայրիվերո իրավիճակը և այն հանգամանքը, որ օր-օրի սեղմվում է օդակը: Մինչդեռ մենք այդպես էլ չենք կարողանում ձևավորել հայոց հիմնարար խնդիրները լուծող ու մեր ինքնության պաշտպան ու դարբնոց հաստատությունը՝ Հայոց մարտիկների հոգևոր գունդը: Կարծում եմ, որ այս իրավիճակից ելնելով՝ մեզ անհրաժեշտ է նոր մոտեցում: Ուստի, բոլոր այն հայերը, անկախ նրանից՝ կրոնավոր են թե աղանդավոր, աթեիստ են թե հավատացյալ, որոնք ուզում են պահպանել հայոց ինքնությունը և այն սնուցող մեր արարչապարզև հավատը, պետք է անվերապահորեն հրաժարվեն բոլոր ավելորդություններից: Վստահաբար սա՛ է միակ ճանապարհը, եթե ի խորոց սրտի ուզում ենք օգտակար լինել այս կարևորագույն հարցում ու մեզ հայ ենք համարում: Այլապես անիմաստ են ու ավելորդ բոլոր տվյալատանքները: Փաստերը հանգեցրին այս հանգրվանին՝ ցուցելով բոլոր օտարոտի պատվաստումների անիմաստությունը, առավել ևս՝ եթե դրանք ճշմարիտ որթատունկի վրա չեն հաստատված:

Այդ դեպքում հարց է առաջանում՝ իսկ ո՞րն է մեր կենսատու հիմքը, այն բունը, որի վրա հաստատվելով՝ պահպանել ենք մեր հավաքական ինքնությունը և մեր սրբազան արժեհամակարգը: Այն մշտապես կենսունակ է և ևս հազարավոր տարիներ կարող է ապահովել մեր հարատևությունը կենաց ծառի պտղաբերմամբ, եթե կրկին սնուցվենք ու հաստատվենք այդ կենսատու բնի մշտաբուխ գորության վրա: Իսկ դա նշանակում է վերականգնել մեր Սրբազան ավանդույթը՝ հզորության վրա հիմնված արդարության հաստատում մեր միջավայրում և ողջ աշխարհում: Հետայսու ապրել ու գործել տիեզերական ջրածին հային բնորոշ արժեքներով, իսկ եթե չունենք այդ գորությունը, համախմբված դաստիարակենք նոր սերունդ, քանզի մեր նոր սերունդը ունակ է և ունի այդ հրաշքի գործադրման ներուժը:

Միայն թե այսօր աշխարհում քաղաքական մի բացիլ կա, որը տարածվել ու հասել է նաև Հայաստան: Այդ բացիլը պատերազմաբեր է ու մահաբեր: Տա Աստված, որ մենք հանկարծ բացիլակիր չլինենք և հասկանանք, որ իրական խաղաղություն հնարավոր է, եթե մեզ վստահեն ու հարգեն: Հակառակ դեպքում մեզանով առևտուր են անելու: Ընդ որում՝ բոլորը: Միշտ հարկավոր է հիշել, որ կյանքում երբեմն սև շերտագիծը դեպի լուսավոր ապագա թոնչքուղու սկիզբ, մեկնակետ (взлетная полоса) կարող է դառնալ: Թե չէ 21-րդ դարում մեռնելով հաղթելն այնքան էլ իրատեսական չի: Ակամա Գուրգեն Մահարիին հիշեցի ու նրա «Այրվող այգեստանները», որտեղ ցավագին տառապանքով իրատես գրողն ընդգծում է, թե այն ժողովուրդը, որը շատ է խոսում մեռնելով հաղթելու մասին, կմեռնի, բայց չի հաղթի: Կամ՝ ինչ է «ես երգելով կուգեմ մեռնիլ...»: մահի, մեռնելու այս անօրինակ քարոզը: Կարծես մարդիկ նետվել են մեծ գործի ոչ թե նրա համար, որ ապրեն պայծառ, լիարժեք կյանքով, այլ որպեսզի մեռնեն, անպայման մեռնեն, այլապես, առանց մեռնելու ի՞նչ հաղթանակ: Չէ՛, պետք է բարձր լինի հաղթանակի ոգու ջերմաստիճանը, զոնե առնվազն թափվող արյան ջերմությանը համաչափ: Այնքան մեծ է այս անպայման մեռնելու, անպայման նահատակվելու մոլուցքը, որ մարդիկ անկարող են հրաժարվել այդ մեռնելու սովորությունից մինչև անգամ այն դեպքում, երբ նրանք արդեն հասել են իրենց նպատակին, այսինքն՝ երբ արդեն պետք է ոչ թե մեռնել, այլ ապրել, երբ այլևս կարիք չկա ախ ու վախ անելու Հայաստանի համար: Ի՞նչ ահավոր սովորություն է, մեռնելու սովորությունը: Տպավորություն է, որ ազատություն ձեռք բերելուց հետո էլ մարդիկ պատրաստ են կախաղան բարձրանալ, որպեսզի հնարավորություն ունենան կախաղանի բարձունքից գոչելու՝ դեպի՛ հաղթանակ: Մոռանում ենք, որ արյունով սկսած գործը միայն արյունով կվերջանա:

Յանկացած ժողովուրդ, որն իր պատմության և ավանդույթների տերը չի, իր տան տերն էլ չի: Ի տարբերություն ուրիշ ազգերի, հայերի համար ամենաառաջին տեղում փողն է: Աշխարհում միայն հայերն են, որ փողով իրենց հայրենիքի հողերն են ծախել ու զիջել: Եվ իրենց արդարացնելու համար հնարել՝ փող միայն փող: Իրենց արդարացնելու համար քարոզել ամենաամոթալի «որտեղ հաց, այնտեղ կաց» խոսույթը: Իսկապես ճիշտ է, որ ճշմարտություն որոնողի կողմնացույցը հազվադեպ է սարքին լինում: Այլևս հստակ է նաև, որ եթե ուժեղ ես, ուրեմն կարող ես հակառակորդից ստանալ հնարավոր ամեն բան: Այս տրամաբանությամբ են բոլոր դարերում առաջնորդվում աշխարհի հզորները՝ անսանձ շովինիզմի և բույթ ուժի դիրքերից հարթելով իրենց արյունոտ ճանապարհը:

Առհավատյան՝ Արցախում այժմ խաղաղություն է, սակայն այնտեղ միայն գերեզմաններն են հայկական: Դրանց ոչնչացումն էլ ընդամենը ժամանակի խնդիր է: Դաժան է, սակայն սա է իրականությունը և մեր չստացված խաղաղության գինը: Եվ դա այն դեպքում, երբ Վազգեն Սարգսյանը սովորեցնում էր, որ յուրաքանչյուր ժողովուրդ՝ լինի 3 միլիոնանոց, թե 300 միլիոնանոց, միշտ իր միջից կարող է հանել այնքան մարդ, որոնք կարող են պահպանել երկիրը:

Իսկ վերջում ավելացնեմ, սիրելի իմ ընթերցող, որ կգա օրը, դու կփնտրես գոնե մեկ տող, ստորագրված իմ անունով: Իսկ գիտե՞ս, ինչու, որովհետև, քեզ երբեք ո՛չ մի հարցում չե՛մ խաբել, քաղցր-մեղցր բաժակաճառերով չեմ կերակրել, ասել եմ այն, ինչ մտածել եմ, այն, ինչ իրական է...

Сдана / Հանձնվել է՝ 20.08.2024

Рецензирована / Գրախոսվել է՝ 21.08.2023

Принята / Ընդունվել է՝ 22.08.2023